
ԱՍՏՎԱԾԱՇՆՉՅԱՆ ՍՅՈՒԺԵՆԵՐԸ
Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ԱԹԱՆԵՍՅԱՆ Գ. Ս.

Թումանյանի գեղարվեստական մտածողությունը ամբողջովին համակված է Աստվածաշնչով. աստվածաշնչյան շատ մտքեր ու պոեմներ այս կամ այն ձևով առկա են նրա՝ տարբեր ժանրի գործերում: Փորձենք ցույց տալ դա «Մասունցի Դավիթ» պոեմի և «Զի Աստված ընդ մեզ է» բալլադի օրինակով: Էպոսի մշակումը ստեղծագործական բարդ խնդիր է: Հրանտ Թամրազյանը իրավացիորեն նկատում է. «Թումանյանը և՛ հավատարիմ է մնացել էպոսին, և՛ նույն ժամանակ ստեղծել է գեղարվեստական մի երկ՝ անհատական բացառիկ շեշտադրումներով: Բանաստեղծը կարողացել է պահպանել այս երկու հատկանիշը՝ ժողովրդական ու անհատականը՝ հանդես գալով նաև իբրև ինքնուրույն ստեղծագործող մեծություն»¹: Թումանյանը նախ «բեռնաթափում է» ծավալուն նյութը՝ որսալով և ընդգծելով ամենաէականը: Անդրադառնանք միայն այն շեշտադրումներին, որոնք առնչվում են աստվածաշնչյան աղերսներին: «Մասունցի Դավիթ» պոեմն սկսվում է մի դրվագով, որը հանդիպում է էպոսի շատ պատումներում: Մի կողմ են թողնված Արմաղանի ուխտը՝ «Ամա՛ թ'էրթաս- ես ուխտ կ'անեմ. Իմ հերն ես դու, իմ աղբերն ես- Քառսուն տարի դու իմ գողենք չըգաս», օտարու- թյունը, արաբները և Իսմիլը: Միանգամից գործողության մեջ է մտնում Մհերը, որ քառասուն տարի իշխել է Մասունում, երկիր պահել: Մհերը մտածում է իր երկրի գալիքի մասին: Նա խոր ցավ ունի. նրան մտահոգում է իր անժառանգ լինելը.

- Հասել են կյանքիս աշնան օրերը,
Շուտով սև հողին կերթամ ես գերի,
Կանցնի ծրխի պես փառքը Մըհերի,
Կանցնեն և՛ անուն, և՛ սարսափ, և՛ ահ,
Իմ անտեր ու որբ աշխարհի վըրա
Ոտի կըկանգնեն հազար քաջ ու դև...
Մի ժառանգ չունեմ՝ իմ անցման ետև
Իմ թուրը կապի, Մասուն պահպանի...(9)²

Հնչում է կյանքի անցողիկության, ունայնության թեման, ինչպես Ժողովողի գրքում. «Ունայնութիւն ունայնութեանց՝ ասեց Ժողովողը, ունայնութիւն ունայնութեանց, բոլորը ունայն է» (Ժողովող, Ա-2): «Ես տեսայ այն բոլոր գործերը՝

¹ Թամրազյան Հ., Հովհ. Թումանյան. Բանաստեղծը և մտածողը, Ե., 1995, էջ 269:

² Թումանյան Հ., Երկերի լիակատար ժողովածու, 10 հատորով, հ. 4, Ե., 1991:

երկնքի տակ գործուած. եւ ահա բոլորն ունայն էր, քամիի աշխատանք էր» (Ժողովող, Ա-14)*:

Ծերացած Մհերի տխրության գլխավոր պատճառը ոչ թէ նրա սեփական կյանքի մոտալուտ վախճանն է, այլ այն, որ նրա տոհմը պետք է ընդհատվի, և երկիրը մնա անպաշտպան: Ու այս ծանր մտորումների պահին հայտնվում է Աստծո հուր-հրեղեն դեսպանը՝ Հրեշտակը, և Մեծ Մհերին հայտնում վճիռը. նա արու զավակ կունենա միայն անձնագոհությամբ՝ իր և կնոջ կյանքի գնով: Եվ Մհերն առանց երկմտելու հայտնում է իր պատրաստակամությունը՝ ընդունելով Հրեշտակի պայմանը: Այստեղ մահի գաղափարն ար-դեն ստանում է էպիկական հնչեղություն՝ առանց ողբերգության, առանց ահի, իբրև իրերի բնական ու բանական կարգ: Կարևորը տոհմի ու երկրի կյանքն է.

-Իր կամքը լինի, ասավ Մրհերը.

Մենք մահինն ենք միշտ ու մահը մերը,

Բայց որ աշխարքում ժառանգ ունենանք,

Մենք էլ նրանով անմեռ կըմընանք (10):

«Մասունցի Դավիթ» էպոսում այս հատվածը ներկայացված է այսպես.

-Տղամարդ որ կա գլուխ է,

Կնիկ որ կա՝ ոտ է:

Էն չի կարնա դուռ բռնի մարդու վերա

Դուռ կը բանամ դու կը գաս տուն.

Աստված մեզ մեկ տըղա կը տա

Մհերը ասաց- Աստված թող մեկ տըղա տա մեզ

Էրթա Մելիքի օձիք բռնի.

Թող չը հանգչի Սասնա ճրագ.

Աստրծու գառ, գել չի ուտի³:

Այս դատողությունների ակունքը, անշուշտ, աստվածաշնչյան պատգամն է. «Բայց կամենում եմ, որ դուք գիտենաք, թե ամեն մարդի գլուխը Քրիստոսն է, և կնկայ գլուխը՝ մարդը, և Քրիստոսի գլուխն՝ Աստուած» (Ա Թուղթ առ Կորնթ., ԺԱ-3):

Չին և նոր Կտակարաններում շատ են հանդիպում նմանօրինակ պատմություններ, որտեղ Աստված հրեշտակների միջոցով իր կամքն ու պատգամն է հաղորդում: Հիշենք Ջաքարիային, որին երևաց Տիրոջ հրեշտակը՝ ավետելով արու զավակ ունենալու մասին. «Մի վախենար, Ջաքարիա. որովհետեւ քո աղօթքը լսուեցավ, և քո կինն Եղիսաբեթը մի որդի կ'ծնի քեզ, և նորա անունը Յովհաննես

* Մեջբերումները Աստվածաշնչից կատարված են Ստոկհոլմի 1989 թվականի Աստվածաշնչի թարգմանության ինստիտուտի հրատարակությունից:

³ Մասունցի Դավիթ (համահավաք տեքստ), Ե., 1988, էջ 202:

կ'դնես» (Ղուկաս, Ա-13): «Ես Գաբրիէլն եմ, որ Աստուծոյ առաջին կանգնում եմ, եւ ուղարկուեցայ քեզ հետ խօսելու եւ այս բաները քեզ ավետիք տալու: Եւ ահա համր կ'լինես, եւ չես կարենալ խօսել, մինչեւ այն օրն՝ որ այս բաները կ'լինին...» (Ղուկաս, Ա-19):

Աստվածաշնչյան մի այլ դրվագում Գաբրիէլ հրեշտակը, գալով Մարիամի մոտ, ողջուն է հղում. «Ողջոյն քեզ, ով շնորհընկալ. Տէրը քեզ հետ. օրհնեալ ես դու կանանց մէջ: Եւ նա նորան տեսնելով շփոթուեցաւ նորա խօսքի համար, եւ իր մտքումը մտածում էր, թէ ինչպիսի բան պիտի լինի այս ողջոյնը» (Ղուկաս, Ա-28): Եվ ապա՝ «Եւ ահա դու կ'յղանաս՝ եւ որդի կ'ծնես. եւ նորա անունը Յիսուս կ'դնես: Նա մեծ կ'լինի, եւ Բարձրեալի Որդի կ'կոչուի» (Ղուկաս, Ա-31): Հրեշտակի ավետիսն Ավետարանում ներկայացված է որպէս Մարիամին հղված ողջուն: Պոեմում ևս Միերին ուղղված խոսքը Հրեշտակն սկսում է ողջոյնով.

Ողջոյն մեծագոր Սասմա հըսկային,
Քու ձենը հասաւ աստըծու գահին,
Ու շուտով նա քեզ մի զավակ կըտա:
Բայց լաւ իմանաս, լեռների՝ արքա,
Որ օրը որ քեզ ժառանգ է տըվել
Էն օր կըմեռնէք քու կինն էլ, դու էլ (10):

Թումանյանի պոեմում ևս կա պայման՝ կյանքի գնով ժառանգ ունենալ: Հրեշտակի խոսքն ընկալվում է իբրև երջանիկ ավետում՝ մոռանալով ահեղ պայմանի մասին: Բուն էպոսում եթե Միերի և Արմաղանի վախճանվելը Դավթի ծնվելուց հետո երդմնագանցության գինն է, որ իրենք գիտեին, ապա պոեմում Դավթի ծնվելուց հետո նրանց վախճանվելը դառնում է խնդրանքի գին:

Էպոսում Միերի Մըսր գնալը, կնոջ երդման պատճառով անզավակ մնալը և կնոջ՝ քառասուն տարի նրան չմերձենալու երդումը Թումանյանը պոեմում ներկայացնում է իբրև ծեր դուստրի՝ քառասուն տարի Սասունում իշխելու, բայց անզավակ մնալու դրվագ: Այդ մասին Հր. Թամրազյանը գրում է. «Խոր վիշտը՝ ճակատագրի դեմ հանդիման վեհություն է տալիս պատկերին, էպիկական մեծություն: Նրա ծանր մտորումներին խառնվում է և Աստված: Աստծո հուր-հրեղեն դեսպանը հայտնում է վճիռը. Միերը զավակ կունենա միայն անձնագոհությամբ. հայր, մայր կմեռնեն զավակի ծննդյան օրը: Միերը ճակատագիրն ընդունում է բարձր խոհականությամբ»⁴: Պոեմում ևս զավակ ունենալու մասին տեղեկացվում է Հրեշտակի միջոցով.

Մի օր էլ՝ էն գորշ հոնքերը կիտած,
Երբ միտք էր անում, երկընթից հանկարծ
Մի հուր-հրեղեն հայտնըվեց քաջին,
Ոտները ամպոտ կանգնեց առաջին (10):

⁴ Թամրազյան Հ., նշվ. աշխ., էջ 270:

Անմիջապես հիշում ես Սուրբ Գրքի բառերը. «Ահա նա գալիս է ամպերով. եւ ամեն աչք կ'տեսնէ նորան....» (Յայտնություն, Ա-7):

Այնուհետև սկսվում է որդի Դավթի պատմությունը: Մանուկ Դավիթը շատ արագ է հասունանում, ինչպես վայել է էպոսին: Եվ ահա արտատեր պառավը Դավթին տեղեկացնում է անցյալ օրերի, ջոջանց փառքի, հոր որսատեղի, զենք ու զրահի, Քուռկիկ Ջալալի մասին:

Թե որսկան ես դու- նետ-աղեղդ ա՛ն,
Ծրճակա գլխից մինչև Սեղանսար
Քու հերը ձեռին մի աշխարհ ուներ....(16)

...Թե կրտրիճ՝ ես դու, աղեղդ ա՛ն զընա՛,
Քու հոր աշխարքին տիրություն արա՛,
Քու հոր գանձը կե՛ր,
Թողել ես անտեր,
Մըսրա թագավոր դրրկել է՝ տանի:

...Դո՛ւ պետք է էն հոր զավակը լինե՛ս...
Քու հերն ուներ կըռվի համար
Հըրեղեն ձի, ոսկի քամար,
Ծալ-ծալ կապեն, գուռը պողպատ,
Թամբ սաղափեն, կուռ սաղավարտ,
Խաչ պատրաստին իր աջ բազկին,
Զըրահ շապիկ, Թուր-Գեճակին....(27)

Այդ հատվածը հիշեցնում է Հին Կտակարանի ջրհորների պատմությունը:

«Եւ իր հօր Աբրահամի օրերումն իր հօր ծառաների փորած բոլոր ջրհորները Փղշտացիք գոցեցին, եւ հողով լցրին նորանց: Եւ Աբիմելէքն ասեց Իսահակին. Գնա մեզանից, որովհետեւ մեզանից շատ ավելի զօրավոր եղար: Եւ Իսահակը գնաց այն տեղից եւ իր վրանները Գերարի Ձորումը բացաւ, եւ այն տեղ բնակուեց: Եւ Իսահակը դարձեալ այն ջրհորները փորեց, որ իր հօր օրերումը փորել էին եւ որ Փղշտացիք գոցել էին Աբրահամի մեռնելուց յետոյ. եւ նորանց այնպիսի անուններ դրաւ, ինչպիսի անուններ դրել էր իր հայրը» (Ծննդոց, ԻԶ-15):

Պոեմում կա նս մեկ դրվագ, որ սերտորեն առնչվում է Աստվածաշնչին: Էպոսում ասվում է, որ Դավիթը Ձենով Օհանի հետ գնում է Մարութա սարը, զիշերը տեսնում է, որ մի լույս է ելնում այնտեղից: Պոեմում Մարութա սարից ելնող լույսը Թումանյանը ներկայացրել է այսպես.

Մին էլ նկատեց, որ մութը հեռվում
Մի թեժ, փայլվիլուն կըրակ է վառվում:
Էն լուսը բրնձած՝
Վեր կացավ, զընաց
Գընաց ու զընա՛ց, բարձրացավ մի սար,
Բարձրացավ, տեսավ մի մեծ մարմար քար

Կիսից պատրուված,
Ու միջից վառված
Բըխում է լուսը պա՛րզ, քուլա-քուլա՛,
Բարձրանում, իջնում ետ քարի վրա:
Վար իջավ Դավիթ էնտեղից կըրկին,
Վար իջավ, կանչեց Ձենով Օհանին.
- Ե՛լ, հորեղբայր, քանի՞ քրնես,
Լուս է իջել բարձր սարին,
Բարձր սարին, մարմար քարին (17):

Դավիթը արթնացնում է Ձենով Օհանին և հարցնում, թե այդ ինչ լույս է, որ իջել է «բարձր սարին, մարմար քարին»: Ձենով Օհանը ասում է, որ այդ լույսը բխում է այնտեղից, ուր մի ժամանակ կանգնած էր Մարութա Սուրբ Աստվածածինը, այսինքն՝ լույսը բխում է սրբության տեղից, որը լույսին համահունչ պայծառությամբ մարմար քարն է: Նորից հիշենք Սովսեսին, երբ տեսնում է պայծառ լույս, որ բխում է սուրբ սարից. «...Աստուծոյ Քորեբ սարը եկաւ: Եւ Եհովայի հրեշտակը կրակի բոցով երեւեցավ նրան մորենու միջից. և նա տեսաւ, որ ահա մորենին կրակով վառվում էր, բայց մորենին չէր սպառվում» (Ելից, Գ-2): Երկու դեպքում էլ աստվածային լույսն է պարուրել սուրբ սարը, վառվում է ու չի սպառվում:

Հին Կտակարանի հետ որոշակի աղերս կա նաև պոեմի մի այլ դրվագում: Մելիքի փորած հորում փակված Դավթի ականջին հասնում է Ձենով Օհանի կանչը.

Հէ յ-հէ յ Դավի թ, ո՛ր տեղ ես դու.
Հիշի՛ր Խաչը քո աջ թնի,
Սուրբ Տիրամոր անունը տո՛ւր,
Ու դուրս արի լույսն արևի...(35)

Ահա և Դավթի արձագանքը՝

Ո՛վ Մարութա Աստվածածին,
Ո՛վ անմահ խաչ պատարագի,
Ձե՛զ եմ կանչել,- հասե՛ք Դավթին...
Կանչեց, տեղից ելավ ոտքի,
Էնպես զարկեց ջաղացքարին՝
Քարը եղավ հազար կրտոր,
Կրտորները երկինք թռռան,
Ու գընում են մինչև էսօր (35):

Այս դրվագը հիշեցնում է Գողիաթի և Դավթի հայտնի մենամարտը.

«...Եւ մի միջնամարտիկ էր դուրս եկել Փղշտացիների բանակից՝ անունը Գողիաթ՝ Գեթացի՝ բարձրութիւնը մէկ կանգուն եւ մէկ թիգ...» (ԱԹագավորաց, ԺԷ-4): Իսրայելի բանակում սարսափում էին անգամ նրա անունը լսելիս, էլ ուր մնար, որ Գողիաթի պահանջով մենամարտեր որևէ մեկը և որոշվեր պատերազմի ելքը: Պատանի գառնարած Դավիթը, լսելով այդ մասին, բարկանում է. «...այս անթլփատ

Փղշտացիին ո՞վ է՝ որ կենդանի Աստուծոյ զօրքերին նախատէ» (Ա Թագավորաց, ԺԷ-26): «Եվ Դաւիթն ասեց Փղշտացիին. Դու սրով, նիզակով եւ գեղարդով եւ գալիս ինձ վերայ, բայց եւ գալիս եմ քեզ վերայ Զօրաց Տիրոջ Բարայէլի զօրքերի Աստուծոյ անունովը, որին դու նախատեցիր: Այսօր Տէրը քեզ իմ ձեռքը կ'մատնէ. ու եւ քեզ կ'մեռցնեն, եւ քո վերայից գլուխդ կ'առնեն» (Ա Թագավորաց, ԺԷ-45): «Եվ այս բոլոր ժողովքը իմանան՝ որ Տէրը սրով եւ նիզակով չէ ազատում. որովհետեւ պատերազմը Տիրոջն է, եւ նա ձեզ մեր ձեռքը կ'մատնէ» (Ա Թագավորաց, ԺԷ-47):

Պոռնոմ քաջության, հերոսականության դրվատումին զուգահեռ, որպէս նոր օրերի արձագանք, արտահայտվել են նաև ազգամիջյան խաղաղության, աշխատանքի, արարման և հաշտության գաղափարները: Դրանք առավել ցայտուն դրսևորվել են հատկապէս Մելիքի գործի դեմ Դավթի կովի դրվագում, որ հիշեցնում է Հին ուխտից հետևյալը.

«Եւ այն քաղաքից մի իմաստուն կին աղաղակեց. Լսեցէք, լսեցէք. մէկ ասեցէք Յովաբին՝ Սօտեցիր մինչեւ այստեղ որ խօսեն քեզ հետ: Նա էլ մօտեցաւ նորան, եւ կինն ասեց. Յովաբը դո՞ւ եւ. եւ նա ասեց. Ես եմ. եւ նա ասեց նորան՝ Լսիր աղախնիդ խօսքերը. եւ նա ասեց. Լսում եմ: Եւ նա ասեց այսպէս՝ Առաջ այսպիսի խոսքեր էին խօսում թէ Աբելումը թող հարցնեն եւ այնուհետեւ վերջացնեն: Ես Բարայէլի խաղաբարներիցն ու հաւատարիմներիցն եմ. դու ուզում ես Բարայէլի մէջ մի մայրաքաղաք փչացնել. ի՞նչու համար բնաջինջ անես Տիրոջ ժառանգութիւնը: Եւ Յովաբը պատասխանեց եւ ասեց. Քաւ լիցի, քաւ լիցի ինձ, եթէ ես բնաջինջ անեմ կամ թէ քանդեմ: Բանը այդպէս չէ. այլ Եփրեմի սարիցը մի մարդ՝ անունը Սաբէէ որդի Բոքորի՝ իր ձեռքը բարձրացրել է Դաւիթ թագաւորի դէմ. տուէք միայն նորան եւ կ'գնամ այդ քաղաքի վերայից. եւ այն կինն ասեց Յովաբին. Ահա նորա գլուխը քեզ մօտ կը գցուի պարսպի այն կողմը: Եւ այն կինը գնաց իր իմաստասիրութեամբը բոլոր ժողովրդի մօտ. եւ կտրեցին Բոքորի որդի Սաբէէի գլուխը եւ գցեցին Յովաբի մօտ. եւ նա փող հնչեցրեց, եւ այն քաղաքի վերայից ցրուեցան ամեն մարդ իր վրանը, իսկ Յովաբը ետ դառավ Երուսաղէմ թագաւորի մօտ» (Բ Թագավորաց, Ի- 16-22): Իսկ պոռնոմ արյան հեղեղի մէջ լսվում է աշխարհ տեսած և բանագետ արաբ ծերունու խոսքը.

Մի ծերունուս խոսքին մըտիկ
Տե՛ս, քու խելքը ինչ է կըտրում:
Ի՞նչ են արել քեզ էս մարդիկ,
Հէ՛ր ես սըրանց դու կոտորում (30):
...Թագավորը գոռով- թըրով
Հավաքել է, էստեղ բերել:
Խեղճ մարդիկ ենք՝ պակաս օրով,
Մենք քեզ վնաս ի՞նչ ենք արել:
Թագավորն է քու թըշնամին,
Կըռիվ ունես - իր հետ արա,

Հե՞ր ես քաշում Թուր-Գայժակին

էս անճարակ խալիսի վրա (30):

Ժողովրդական խորհուրդները, որ հնչում են իմաստուն կնոջ և բանագետ ծերունու բերանից, հավերժական են. ամեն անգամ նորովի են հնչում՝ նորագույն ժամանակներում բացահայտելով բոլոր ժամանակներին հարազատ համամարդկային իդձեր ու խոհեր: Պոեմում կա մի հավելում, որն արտահայտում է Թումանյանի՝ «հաշտ ու խաղաղ մարդկության» հայտնի երազանքը: Դավիթը խրատում, խորհուրդ է տալիս Սրսրա բանակին՝ ռանչպար մարդկանց. ապրել հաշտ ու խաղաղ, վերջ տալ կռիվներին ու թշնամությանը.

Չանձրացե՛լ եք խաղաղ ու հաշտ

Հողագործի օր ու կյանքից,

Թե՞ զրզվել եք ձեր հանդ ու դաշտ,

Ձեր հունձ ու փունջ, վար ու ցանքից...(39)

Թումանյանը բանաստեղծական մշակման է ենթարկել ժողովրդական մի ավանդություն, որը այնքան հին է, որ հայտնի է եղել Գրիգոր Նարեկացու հորը՝ Խոսրով Անձնացուն, այն էլ իբրև վաղուց կատարված մի իրողություն: Խոսքը «Ջի Աստված ընդ մեզ է»⁵ բալլադի մասին է, որի պոեմն թեև անմիջականորեն չի կապվում աստվածաշնչյան որևէ դրվագի հետ, ուղղակիորեն մարմնավորում է Հին ու Նոր Կտակարաններում ամենատարբեր առիթներով և ամենատարբեր իրադրություններում կրկնվող այն գաղափարը, թե Աստված ամենուր է և բոլոր պարագաներում մարդու հետ է, անտեսանելի ձեռքով վարձատրում է բարուն ու պատժում չարը:

Ըստ ավանդության՝ լեզգիները, ասպատակելով Հայաստանը, գալիս հասնում են Սևան, ուր ապաստանել էին լճի շրջակա բնակավայրերի բնակիչները: Չկարողանալով նավակներով հարձակվել և գրավել կղզին՝ նրանք որոշում են այն գրավել խաբեությամբ: Լեզգիները պատրաստում են քառասուն արկղ, նրանցից յուրաքանչյուրի մեջ տեղավորում երկուական ասպատակ, կղզու վանականներին ներկայանում են իբրև վաճառական և խնդրում են այդ արկղերը՝ որպես իրենց վաճառելիք ապրանք, միառժամանակ ի պահ դնել կղզում՝ իբր թե զերծ պահելու լեզգիների կողոպուտից: Վանականները միամտորեն հավատում են և թույլ տալիս, արկղերի հետ գալիս է ևս երկու լեզգի՝ իբրև իրենց ունեցվածքի պահապան: Բայց նպատակն այլ էր. նրանք գիշերը պիտի բացեին արկղերը և կղզին գրավեին ներսից: Սակայն նրանց այս չար դիտավորությունը խափանվում է աշխարհիկ առումով բարեբախտ պատահականությամբ, որ ավանդության մեջ ներկայացվում է որպես հոգևոր նախախնամություն, որի մասին ասվում է նաև Կյումուշխանեցու պատմության մեջ: Այդ պատմության համաձայն՝ Աստված՝ որպես «անքուն ակամբ պահպանողն», ի չիք է դարձնում այս դավադրությունը հետևյալ ձևով (Մանվել վրդ.

⁵ Թումանյան Հ., հ. 2, Ե., 1990, էջ 195:

Կիւմուռլիսանեցի, Պատմութիւն անցից անցելոց Սեւանայ վանուց, Վաղարշապատ, 1871, էջ 32-38): Վանքի սաներից մէկը, որ այդ օրը իր սերտած դասով չէր գոհացրել վարդապետին, պարսավանքի է ենթարկւում և գնում է արկղերի մոտ պարապելու: Երբ հենւում է արկղերից մէկին, ներսում գտնւող ասպատակին թվում է, թէ իրենց ընկերն է և պետք է բացի արկղը, հարցնում է, թէ արդեն ժամանա կ'են է դուրս գալու: Աշակերտը անմիջապէս այս մասին պատմում է ուսուցչին: Միաբանների հետ ուսուցիչը ստուգում է երէխայի ասածը: Մէկ այլ արկղի պատին են խփում, և ներսից հնչում է նույն հարցը: Բռնում են այն երկուսին, ովքեր կղզի էին եկել՝ որպէս թէ արկղերը պահպանելու համար: Նրանք էլ պատմում են, թէ ինչ էին ծրագրել: Բմանալով, թէ ինչ սոսկալի դավադրությունից են փրկվել՝ վանականները փառք են տալիս Աստծուն և մեծահոգությամբ ու ներողամտությամբ որոշում են այս արկղերը հետ ուղարկել, սակայն կղզում ապաստանած ժողովուրդը պահանջում է, որ արկղերը այդպէս փակ ծովը նետվեն:

Աստվածաշնչյան «Տէր աստված, մեր թշնամիները մեր ձեռքը տվեցիր» խոսքերի հետևանքով արկղերը ծովն են գլորում կղզու բարձրադիր մասից՝ Սուրբ Առաքելոց և Ս. Հովհաննէս Մկրտչի եկեղեցիների մոտից: Սպանում են արկղերը կղզի բերած երկու ավագաններին և թաղում Առաքելոց վանքի մոտ: Ասվում է, որ այս դեպքից հետո գրվել է Խաղաղական ժամերգության ժամանակ երգվող «Շնորհեա մեզ, Տէր» երգը, որը Կիւմուռլիսանեցին անվանում է «Զհոգելի խորհրդակոտ զերգս Խաղաղականին»:

Այս պատմությունը Թումանյանը ներկայացնում է բավական ինքնատիպ: Իրար հաջորդող տներում զուգահեռ ընթանում են այս պատմության պոթեն և «Շնորհեա մեզ, Տէր» երգի համապատասխան տողերը: Ներկայացվում են անցողիկն ու մնայունը՝ թշնամու չար մտադրությունը և Սևանա կղզուց ելնող օրհներգությունը, որ է՝ փառաբանություն, գոհություն:

Բալլադը բաղկացած է ինը տնից, որոնցից յուրաքանչյուրն ուղեկցվում է «Շնորհեա մեզ, Տէր» երգի տողերով, և մեզ թվում է՝ ներկա ենք Սևանա վանքի ժամերգության ընթացքին⁶:

Թումանյանի գործից երևում է, որ երգը մինչ այդ պատմությունն է եղել և ընթանում է գործողություններին զուգահեռ: Սա խորհրդանշում է երկնայինի և հոգևոր մնայունի անդրադարձը և կատարումը առօրյա երկրային կյանքում:

⁶ «Զի Աստուած ընդ մեզ է» ստեղծագործությանը հանգամանալից անդրադարձել է Վ. Դերիկյանը «Թումանյանը և հայոց հոգևոր ավանդույթը» գրքում: Ներկայացնելով տարբեր հեղինակների հաղորդած պատմությունները՝ նա նկատում է. «Այս պատմությունը վկայակոչած հեղինակները, սակայն, հստակ չեն գրում հիշյալ երգի և Սևանա կղզում տեղի ունեցածի հարաբերակցության մասին: Այսինքն, թէ նախ երգն է ստեղծվել և մաս կազմել Խաղաղական ժամերգությանը, և հետո տեղի է ունեցել հիշյալ դեպքը, որի ժամանակ այս երգը երգելով են արկղերը Սևանը նետել, թէ հակառակը՝ այս պատմությունն է առիթ հանդիսացել հիշյալ երգի գրության համար»:

Պատմությունը սկսվում է երգի առաջին տողով և ավարտվում վերջին տողերով։ Մևանի հետ կապվող այս դեպքը կատարվել է մեկ օրվա ընթացքում։ Գործողության զարգացումը ներկայացնող ինը տները խորհրդանշում են օրվա ինը ժամերգությունները։ Այս գործը Թումանյանն անվանել է ազգային ավանդություն։ Այն թեև հիշվում է X դ. Խոսրով Անձևացու մոտ, սակայն XIX դ. այս պատմությունը հիշատակած բոլոր հեղինակները այն կապում են լեզգիների արշավանքի հետ։ Թումանյանի բալլադի հիմքում ընկած է այս վերջին վարկածը.

Ահա եկել պաշարել են
 Լեզգիները մեր Մևան,
 Բայց չեն կարող կըղզին մըտնեն,
 Կապտեն զարդերն Աստծո տան՝
 Ձի Աստուած ընդ մեզ է... (195)

Լեզգիները «հանդի սոված գելերի պես» հարձակվել են, պաշարել կղզին, բայց գրավել չեն կարողանում, իսկ ժողովուրդը պատսպարվել է կղզում՝ «էն սուրբ, ամուր օթևանում», խաղաղ երգում է. «Ձի Աստուած ընդ մեզ է»։ Այնուհետև ներկայացվում են վանքը և խաչը վեր բռնած աղոթողը, որ Աստծուց խնդրում է երկնային խաղաղություն։ Մրան հաջորդում է բուն պատմությունը, ներկայացվում, թե ինչպես լեզգիները իբրև վաճառական են ներկայանում։ Նրանք ոչ թե իրենց արկղերն են բերում, այլ հյուր են գալիս։ Դրանից ստեղծագործությունն առավել շահել է։

«Սովդաքար մարդիկ» տեղ են աղաչում՝ դոնադ ենք գալիս Մևանա վանքին։ Երևում է հայ ժողովրդի հյուրընկալությունը, որը բարձրացվում է համամարդկային բարոյականության աստիճանի.

-Եկե ք, անկասկած, թեպետև լեզգի,
 Աստծու տունն է սա, հանգեք դուք խաղաղ,
 Էսպես է կարգը մեր հայոց ազգի,
 Եկեք, մեր օտար եղբայրներ անվախ.
 «Մեք երգեսցուք զբան բարի,
 Ձբան բարի հանապազօր,
 Եւ որ նրստիք ի խաւարի՝
 Լոյս ծագեսցի առ ձեզ հրգօր»,
 Ձի Աստուած ընդ մեզ է... (196)

Հաջորդ տան մեջ ներկայացվում է դավադրության բացահայտումը։ Ավագակների հետ հոգևոր-բարոյական հակադրությունն առավել ընդգծելու համար դասը չսովորած աշակերտի փոխարեն պատկերված է արկղերի մոտ խաղացող անմեղ հայ մանուկը՝ որպես Աստծուց առաքվող հրեշտակ, որ տեղյակ է պահում վտանգի մասին։

Հայի մանուկը խաղում է կողքին,
 Լսում է արկղից զսպված աղաղակ...

«Եւ առաքեալ առ մեզ, Աստուած,
 Զհրեշտակ մեծի Քո խորհրդոյ»:
 Ճըչում է անմեղ մանուկն երկյուղից,
 Ոտքի է ելնում բովանդակ կրդզին.
 Քանդում են արագ, և ահա արկղից
 Ելնում է դաժան զինավառ լեզգին.
 «Պահեա զմեզ, Տէ՛ր, ի պատրանաց
 Նենգ թըշնամոյն» (197):

«Պատրանաց նենգ թըշնամոյն» արտահայտությունը տվյալ տեքստում նշանակում է «թշնամու խաբեությունից, պատրումից», որ առավել զգալի է գիշերը:

Հաջորդ տունը սկսվում է հենց գիշեր բառով, և գիշերային տեսարանում զարգանում, հանգուցալուծվում է պատմությունը՝ չարի պարտությամբ.

Գիշերվա մըթնում վառվում են ջահեր,
 Սևանա սեպսեպ ժայռերի զրլիսին,
 Հավաքվում են հայեր և երգում են.
 «Եւ զխորհուրդն զոր դուք խորհիք
 Խափանէ, Տէ՛ր, Աջովն անտես
 Եւ զբանքն զոր դուք խոսիք,
 Մի՛ մընասցէ ծածուկ առ ձեզ,
 Զի Աստուած ընդ մեզ է...» (197):

«Մի մնասցէ ծածուկ առ ձեզ», ոչ մի բան ծածուկ չի մնում. «Եվ չկա մի արարած աներևույթ նրա երեսից. Բայց ամենն էլ մերկ և բաց է նրա աչքերի առաջին, որի հետ է մեր բանը» (Եբրայեցի, Դ-13):

Բալլադն ավարտվում է նույն պատկերով. ավիին հավաքված են լեզգիները, բարձր քարափից ցած են գլորվում արկղերը, և հնչում է հայոց երգը.

«Յահէ ձերմէ ոչ երկիցուք,

.....

Եւ դարձեալ զօրանայցէք,

Դարձեալ մատնիք ի պարտութիւն,

Զի Աստուած ընդ մեզ է...» (197):

Այսպիսով՝ աստվածաշնչյան սյուժեները, պատմությունները, դրանց հետ կապված անունները, բառերը, դարձվածքները, արտահայտությունները Թումանյանն առատորեն օգտագործել է իր ստեղծագործության մեջ մի քանի նպատակով: Ամենից առաջ դրանք բանաստեղծի համար ծառայել են որպես գեղարվեստական արտահայտչամիջոց՝ իր ժամանակի ազգային ու համամարդկային խնդիրներին արձագանքելու համար: Դա վերաբերում է հատկապես նրա հրապարակախոսական հոդվածներին ու ելույթներին, որտեղ աստվածաշնչյան սյուժեների և անունների հիշատակումով խոսքը դարձել է ավելի սուր, դիպուկ ու տպավորիչ: Այս նպատակով սուրբգրային նյութերը հաճախ

գործածվել են նաև բանաստեղծի գեղարվեստական ստեղծագործություններում: Խորհրդային շրջանի գրականագիտությունը Աստվածաշնչի և Թումանյանի ստեղծագործության առնչություններին անդրադառնալիս նկատի է ունեցել հիմնականում այս հանգամանքը: Ստացվել է այնպես, որ աստվածաշնչյան թեմաներին, գաղափարներին, պոեմներին, պատմություններին, անուններին բանաստեղծը դիմել է միայն գեղարվեստական ձևի մակարդակում:

Իրականում խնդիրն ավելի խորքային ու բարդ է: Աստվածաշունչը մարդկության՝ գոյի գերագույն իմաստն ու ճշմարտությունը որոնելու հազարամյակների ճանապարհի գիրքն է: Կարելի է ասել՝ աստվածաշնչյան մտածողությունը աշխարհի, պատմության հանդեպ ճշմարիտ գեղարվեստական հայացքի այն բարձրակետն է, որին երբևէ հասել է մարդկությունը: Հենց այս մակարդակում է, որ սուրբգրային աշխարհը հրապուրել է բոլոր մեծ արվեստագետներին: Բացառություն չէ նաև Հովհ. Թումանյանը: Լինելով հանճարեղ մտածող ու ստեղծագործող՝ նա հենց բուն աստվածաշնչյան պոեմների ու պատմությունների մեջ է հայտնաբերում գոյի կեցության բարձրագույն ճշմարտությունները, որոնք հաճախ որոնել ու չի գտել իր ժամանակի մեջ: Իսկ դա նշանակում է, որ Ս. Գրքի հետ հայ բանաստեղծի կապը եղել է ոչ թե ձևական, այլ միանգամայն օրգանական ու խորքային: Բանաստեղծորեն պեղելով Աստվածաշնչի բազմախորհուրդ աշխարհը՝ Թումանյանը այդ ճանապարհով ձգտում է իր համար յուրովի լուծել արարչության գաղափարի առեղծվածը, սեփական ճանապարհով հասնել ու ձուլվել Աստծու էությանը՝ հազարամյա հեռավորությունից արձագանքելով Գրիգոր Նարեկացուն...

БИБЛЕЙСКИЕ СЮЖЕТЫ В ПРОИЗВЕДЕНИЯХ О. ТУМАНЯНА

АТАНЕСЯН Г. С.

Резюме

Для О. Туманяна Библия была источником вдохновения и творческих замыслов. В восприятии Туманяна Бог являет собой космический дух, заложенный в основе бытия и тем самым осмысляющий человеческую жизнь. Бог – это основа познания, морали и этики, и при всей своей недостижимости он является неразлучным спутником человека. Будучи мыслителем и творцом, О. Туманян находил в библейских сюжетах и историях нравственные постулаты, составляющие сущность человеческого бытия. Обращаясь к библейским сюжетам, он нередко обогащал их содержание новым философским осмыслением в соответствии со своими творческими идеями, что нашло отражение в его поэме “Давид Сасунский” и балладе “Ибо Бог с нами”.